ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. հունվարի 9 թիվ 3 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 1996 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ''Զինապարտության մասին'' ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածի պահանջները Ապարանի զորակոչային տեղամասում 1996թ. ծնված պատանիների կցագրումն անցկացնելու նպատակով՝ *կարգադրում եմ.*

1.Կցագրման ենթակա պատանիների բժշկական զննումն անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. 2012 թվականի ընթացքում Ապարանի զինկոմիսարիատում անցկացնել 1996թ. պատանիների կցագրումը և մինչև 2012թ. դեկտեմբերի 23-ը մարզպետին ներկայացնել տեղեկանք կցագրման արդյունքների մասին:
1/Կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել ''Ապարանի բժշկական կենտրոն'' ՓԲԸ գործադիր տնօրենին նրանց հետագա բուժումը կազմակերպելու համար.
3.''Ապարանի բժշկական կենտրոն'' ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հ.Շմավոնյանին՝
1/ Բժշկական զննության անցկացման նպատակով Ապարանի զինկոմիսարիատին ապահովել անհրաժեշտ մասնագետներով և բուժանձնակազմով, բժշկական պարագաներով և դեղամիջոցներով.
2/Օժանդակել 1995-1996թ. ծնված պատանիների ամբուլատոր քարտերի ժամանակին տրամադրումը զինկոմիսարիատին.
3/Արդյունավետ կազմակերպել կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների բուժումը և արդյունքների մասին ներկայացնել հանձնաժողովի նախագահին:
4.Առաջարկել Ապարանի և Արագածի տարածաշրջանների համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝
1/Ապարանի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել 1995-1996թ. ծնված պատանիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ապահովել կցագրումից դուրս մնացած պատանիների ներկայությունը.
2/Ձեռնարկել անհրաժեշտ աջակցություն, որպեսզի զինակոչիկները ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում տրամադրել փոխադրամիջոց:
5.ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Բասենցյանին՝
1/ Դիսպանսեր հսկողության տակ գտնվող 1995-1996թթ. ծնված պատանիների ամբուլատոր քարտերը և ցուցակները ներկայացնել Ապարանի զինկոմիսարիատ:

2/ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Վ.Գևորգյանին՝
Ապարանի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Ապարանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից հաշվառված 1995-1996թթ. հաշմանդամ պատանիների ցուցակները:
6.Ապարանի ոստիկանության պետին՝
1/Տարածային զինկոմիսարիատ ներկայացնել ՀՀՈ Ապարանի բաժնի կողմից քրեական պատասխանատվությամբ նախաքննության մեջ գտնվող պատանիների ցուցակները:
7.Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Ապարանի զինկոմ Հ.Թանգամյանի վրա:
8.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2012թ. հունվարի 9-ի
թիվ 3-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Ապարանի տարածքային զինվորական կցագրման բժշկական հանձնաժողովի

Հ.ԹԱՆԳԱՄՅԱՆ –հանձնաժողովի նախագահ
Ի.ԱԼՈՅԱՆ -վիրաբույժ, ավագ բժիշկ
Կ.ՄԱՅԻԼՅԱՆ –թերապեվտ
Լ.ՀԱԿՈԲՅԱՆ –հոգեբույժ
Լ.ԱԹՈՅԱՆ -ակնաբույժ
Լ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ –ատամնաբույժ
Դ.ԳՐԻԳՈՐՅԱՆ - նյարդաբան
Ա.ՄԻՐԱԽՈՒՐՅԱՆ -քիթ-կոկորդ-ականջ
Տ.ՀՅՈՒՍՅԱՆ - մաշկավեներոլոգ
Գ.ԳԱԼՍՏՅԱՆ -բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ